«12. Բայց «... Որակի և քանակի միջև հարաբերությունը փոխադարձ է... որակը նույնպես փոխարկվում է քանակի, ինչպես քանակը որակի...» (Էնգելս)։

«13. Բանականության երևույթները տեղի ին ունենում անընդհատ (էվոլյուցիոն կերպով), որակականները՝ թռիչքաձև (մուտացիոն կերպով)։

«14. Ամեն մի փոխհարաբերություն հակասական է։ «Շարժումն ինքնին հակասություն է» (Էնգելս)։ Ամեն մի երևույթ իր մեջ թաքցնում է ներքին հակասություն, հակադիր տարբերի պայքար։ Այս պայքարը բնության և հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր պրոցեսների ներքին շարժիչ ուժն է։

«15. Հակասությունը դրվում և լուծվում է բուն իսկ զարգացման ընթացքում։ Հին հակասության լուծումը մի որոշ նոր բանի դրումն է և այլն։

«16. Մարքսիզմը դիտում է հասարակությունն իբրև մարդկանց հարաբերությունների անընդհատ փոխհարաբերության մեջ գտնվող սիստեմ։

«17. Հասարակությունն առաջանում է իբրև բնության նկատմամբ մարդկության կոլեկտիվ աշխատանքային ներգործության արդյունք։

«18. Սակայն այս ներգործությունը միակողմանի չէ. «Աշխատանքն ամենից առաջ մի պրոցես է, որ կատարվում է մարդու և բնության միջև... զորելով... արտաքին բնության վրա և փոփոխելով նրան, մարդը միաժամանակ փոխում է իր սեփական բնությունը» (Մարքս)։

«19. Այսպիսով, բնության ազդեցությունը մարդու վրա չպետք է դիտել իբրև անմիջական ազդեցություն։

«20. Մարդու և բնության փոխազդեցության պրոցեսում կենտրոնական տեղ են գրավում երեք սաերը, որոնք նշվում են «հասարակության արտադրողական ուժեր» տերմինով. ա) բնության նյութեր, իբրև աշխատանքային ներգործության օբյեկտներ, բ) աշխատանքի գործիքներ ու միջոցներ, գ) մարդու աշխատանքային կենդանի ուժ։

«21. Հանրային արտադրողական ուժերը այն գործոններն են, որ որոշում է հասարակության հիմնական կառուցվածքը։

«22. Այսպիսի կառուցվածք են արտադրական հարաբերությունները. «Իրենց հանրային կյանքի ընթացքում մարդիկ մտնում են որոշակի, իրենց կամքից անկախ հարաբերությունների

250—12

նելի՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են նրանց նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշակի աստիճանին» (Մարքս)։

«23. Արտադրական հարաբերությունների հիմնական ձևը աշխատանքի հանրային կազմակերպման ձևերն են. պարզ աշխատակցություն (կոոպերացիա) և բարդ աշխատակցություն (աշխատանքի բաժանում)։

«24. Աշխատանքի բաժանման հողի վրա առաջանում է արտադրական հարաբերությունների մի այլ ձև՝ բաշխման հարաբերությունները բառիս ընդարձակ իմաստով։

«25. Հասարակական դասակարգային ֆորմացիաների համար արտադրական հարաբերությունների չափազանց կարևոր ձևերն են հանդիսանում դասակարգային հարաբերությունները, որովհետև դրանք են այն հակասությունների աղբյուրը, որոնք «առաջ են տանում» դասակարգային հասարակությունը։

«26. «Դասակարգեր են կոչվում մարդկանց այն մեծ խմբերը, որոնք տարբերվում են իրենց տեղով հանրային արտադրության պատմականորեն որոշակի սիստեմում, իրենց վերաբերմունքով... դեպի արտադրության միջոցները, իրենց դերով աշխատանքի հանրային կազմակերպության մեջ և հետևաբար իրենց ունեցած հանրային հարստության առանձնաւ եղանակներով ու չափերով» (Լենին)։

«27. Դասակարգերը բառիս իսկական իմաստով հանդես են գալիս հանրային զարգացման այն փուլում, երբ աշխատանքի բաշխումը բավական առաջ է գնացել, երբ հավելյալ արդյունքը մշտական երևույթ է դարձել, և արտադրության միջոցների կրկնվող անհամաչափ բաշխումը ամրացրել է հասարակության բաժանումը կայուն դույքային-արտադրական խմբավորումների։

«28. Ըստ Էնգելսի, սա տեղի է ունենում առհմատիրական կարգերի քայքայումից հետո։

«29. «Արտադրական հարաբերությունները... ամբողջությունը գոյացնում է հասարակության տնտեսական կառուցվածքը...» (Մարքս)։

«30. Այս տնտեսական «հիմքի» վրա, նրանով պայմանավորված, բարձրանում են քաղաքական և իդեոլոգիական «վերնաշենքները»։

«31. Քաղաքական վերնաշենքն իր մեջ է ներառնում այն

հարաբերությունները, որ կապված են քաղաքական պարտիաների, քաղաքական պայքարի և պետության հետ:

«32. Իդեոլոգիական վերնաշենքը ներկայացնում է հասարակության մտքերի, զգացմունքների ու պատկերացումների որոշակի սիստեմը:

«33. Իդեոլոգիայի ձևերը հետևյալն են. ա) ամենապարզ իդեոլոգիաները՝ լեզու և մտածողություն, բ) բարձր իդեոլոգիաներ՝ կրոն, արվեստ, բարոյականություն, իրավունք, քաղաքական իդեոլոգիա, գիտություն, ֆիլիսոփայություն:

«34. Եթե մենք ցանկանայինք համառոտակի արտահայտել Մարքս-Ենգելսի հայացքը այժմ հաչախակի «հիմքի» և ոչ պակաս հաչախակի «վերնաշենքի» հարաբերության մասին, ապա մենք կասեինք ահա թե ինչ. 1. արտադրողական ուժերի վիճակ, 2. նրանցով պայմանավորված տնտեսական հարաբերություններ, 3. տվյալ տնտեսական «հիմքի» վրա աճած սոցիալ-քաղաքական կարգեր, 4. մասամբ անմիջապես էկոնոմիկայով և մասամբ նրա վրա աճած ամբողջ սոցիալ-քաղաքական կարգերով որոշվող՝ հանրային մարդու հոգեբանություն, 5. զանազան զարգացխոսություններ, որոնք իրենց մեջ արտացոլում են այդ հոգեբանության հատկությունները» (Պլեխանով):

«35. Հանրային զարգացման պրոցեսը դա հանրային ֆորմացիաների մուտացիոն հերթափոխություն է: Դասակարգային հասարակության համար նման մուտացիոն հերթափոխությունները հանդիսանում են ռևոլուցիաներ:

«36. Իդեոլոգիաները կախում ունեն սոցիալ-տնտեսական հիմքից միայն վերջին հաշվով, և ոչ թե անմիջապես սկյալ հանրային ֆորմացիայի շրջանակներում կարող են զարգանալ համեմատաբար ինքնուրույն կերպով, ենթարկվելով իրենց այդպիսին հանդիսացող իդեոլոգիական զարգացման սեփական ներքին օրենքներին:

«37. Բայց մինչ դասակարգային հանրային ֆորմացիաների վերաբերմամբ մենք պետք է ընդունենք «բազիսից» իդեոլոգիայի ունեցած անմիջական կախման շատ ավելի մեծ աստիճան: Մասնավորապես այդ վերաբերվում է նաև լեզվին:

«38. Մաթեմատիկան անփոխարինելի նշանակություն ունի:

«39. Ինդուկցիայի միջոցով ապացուցվում է թվային ընդհանուր դրույթի ճշտության մասին աշխատանքային պրոցեսից («Աշխատանքի գիծը կապվում է մաթեմատիկական ապացուցման պրոցեսում»):

«40. Այս պատճառով է, Նյուտոնի հայացքները նախնադարյան մարդու կոլեկտիվ աշխատանքից ճշտության մասին, մի շարք մաթեմատիկներ ընդունել և ժողովրդականացրել էին:

«41. Հարաբերական տեսությունը գոնվելով անընդհատ զարգացման պրոցեսում, ավելի մեծ չափով մեթոդ է, քան «տեսություն», բառի խիստական իմաստով:

«42. Հարաբերական տեսությունը դուռ մաթեմատիկական ուսմունք է: Ն. Յա. Մառը իր տեսությունը անվանում է «Հնչվի պիտության հատարակական — մաթեմատիական գրված» («Հարաբերական տեսության զարգացման փուլերով» ժողովածվի առաջաբան):

«43. Հարաբերականությունը հանրային երևույթները պիտում է իրենց շարժման մեջ, ընդ որում հատարակական զարգացման պրոցեսը նա անկնարանում է իրրև մատերյոն պրոցես և ոչ թե էվոլյուցիոն. «Հնդեվրոպական լեզվաբանության լեզվի ծագման, ձևավորման և էվոլյուցիանների՝ որոշ զարաշրջանների ուսումնասիրությունների պիտությունը չէ, այլ՝ առանձին լեզվախմբերի կազմված ձևերի պատմություն» (Ն. Յա. Մառ, «Լեզվի ծագման մասին»): Այսպիսով, հնդեվրոպական լեզվաբանությունը «սոսկ է» («Լեզվաբանության և նյութական կուլտուրան») իր հակադրության հարեվանական տեսության: «Հնդեվրոպական ընտանիքը ընդամենը հատակ ընտանիք չէ բան լեզուների, այլ հետևանք Եվրոպայի նախապատմական լեզուների նոր խաչավորման... որ տեղի է ունեցել հատարակացության արմատական վերափոխության հետևանքով: Այդ խաչավորումը հետևել է տնտեսական կյանքում առաջացած հեղաշրջման («Հարեվանի տեսության մասին»): «Բայց դանազան լեզվաստեղծական զարաշրջանների, լեզվի բուն իսկ կերտման զարաշրջանների, համապատասխանում են նրա վերափոխությունների տնտեսական պրոցեսի, և ոչ թե զար-

պատկան էվոլյուցիոն զարգացման լրիվ ախտոլոգիան բացահայտում է» և այլն («Լեզվի ծագման մասին»):

«44. Հասարակական զարգացման այս դինամիկայի մեջ Ն. Յա. Մառը ընդգծում է նևրքին շարժիչ ուժերի նշանակությունը. «Նաև ռևոլյուցիան ընդ. չրացառող նևրքին էվոլյուցիայի հզորության սահմանները շատ ավելի ընդարձակ են, քան են թաղրվում է սահմանված դիտական հայացքներով» («Ամերիկյան մարդու ծագումը»). «...Հասարակայնության, աշխարհայացքների, սիսկերի ու ձևերի վերամարմնավորումներ, դիալեկտիկական զարգացման կարդով իր խոկ մեջ, առանց որևէ մեկի կողմնակի օգնության» («Լեզվարանության և նյութական կուլտուրա»):

«45. Հարեթական տեսությունը լեզուն դիտում է իբրև երկրորդային, «վերնաշենքային» կարգի երևույթ, որ կախում ունի շրջակա նյութական միջավայրից:

«46. Ն. Յա. Մառը ժխտում է «աշխարհագրական գործոնի» անմիջական ազդեցությունը լեզվական երևույթների վրա. «Տարբեր որոշակի ֆիզիկական իրադրությունը, ֆաունայի, ֆլորայի և այլն որոշակի առկայությունը պետք է հաշվի առնվեն», բայց ոչ թե անմիջապես լեզվական առեղծագործության մեջ, այլ անտեսական-հանրային խնդիրները դնելիս և լուծելիս, հետևաբար, այսպես նույնպիսի անմիջական ազդեցություն է բնության, ինչպես միշտ ու ամենուրեք լեզվի նկատմամբ» («Տեղափոխման միջոցներ»):

«47. Սկսած 1920 թ. հարեթական տեսությունն անընդհատ զարգացնում է այն հիմնական դրույթը, որ «լեզուն ոչ թե բնապատմական, այլ զուտ սոցիալական կերտվածք է» (ձևակերպում, արված հետագայում «Ամերիկյան մարդու ծագման» մեջ):

«48. Լեզվական առեղծագործությունը որոշվում է սոցիալական, առաջին հերթին տնտեսական միջավայրի ձևերով. «...Եվ միաժամանակ, ինչպես արդեն ասացի, ոչ թե երկնային նամենակլատուրայից և ընդհանուր աշխարհայացքներից է սկսում մարդկային մտածողությունն ու լեզվի նախաստեղծումը, այլ առօրյա կյանքից, հանրայնորեն և առաջին հերթին տնտեսականորեն պիտակցված ու օգտագործված շրջապատից» («Տեղափոխման միջոցները»): Լեզվի միասնությունը ենթադրում է «տնտեսական-հանրային կյանքի միասնության արդեն սկզբնական գոյություն» («Ամերիկյան մարդու ծագումը»):

«49. Տնտեսական կյանքի ձևերը, իրենց հերթին, կախում

ունեն արտադրության դարգացման աստիճանից. «Հարեմական-ները շարժվում էին, տեղափոխվում ու հաստատվում այնտեղ, որտեղ գտնում էին պահանջվող մետաղների հանքավայրեր և կուսականներին հարուստ բնական պայմաններ կյանքի անհեռա-կան այն ամբողջ բարդ կառույցի համար, որ կապված էր նրանց ցեղային նյութական կուլտուրայի հիմնադրության՝ մետաղագոր-ծության հետ, որը ամենքից նրանց հատկապես կրոնը, նրանց հոգեբանությունը» («Հարեմական հող-կան»):

«50. Հարեմական տեսության համաձայն, լեզվի մեջ ար-տացոլում են աշխատանքի կազմակերպման դանազան աստի-ճանները («Հարեմական տեսության մասին») և ընտանիքի ձևերը («Հարեմականները», «Լեզվի ծագման մասին», «Լեզվաբա-նության և նյութական կուլտուրա»): Ն. Յա. Մառի կարծիքով, դերանուններն առաջանում են «անիսականության էրտալունքը դիտակցելուց հետո» («Զարդացման փուլերով», Առաջաբան):

«51. Լեզվական մտածողության ձևերի հերթափոխումը ինքը պայմանավորված է ապիսալ-տնտեսական ֆորմացիանե-րի հերթափոխությամբ («Լեզվի ծագման մասին»):

«52. Հարեմական տեսության համաձայն, լեզվի ծագումը կապված է մարդու կոլեկտիվ աշխատանքային գործունեության հետ. «Մարդկային լեզվի արմատները երկնքում չեն և ոչ էլ գժոխքում, բայց նաև ոչ ընկալող բնության մեջ, այլ իր իսկ մարդու մեջ, սակայն ոչ թե նրա անհատական ֆիզիկական բնության, նույնիսկ ոչ կոկորդի, լինչպես և ոչ նրա ուղեղի մեջ, ոչ էլ նրա անհատական գոյի, այլ կոլեկտիվի մեջ, մարդկային գանգվածների տնտեսական համախմբման, ընդհանուր նյութա-կան բազա ստեղծող աշխատանքի մեջ» («Տեղափոխման մի-ջոցները»):

«53. Հնչական լեզուն ծագում է կոլեկտիվ երգից, մտնա-վոբապես աշխատանքային երգից. «Բայց լեզվի հնչյուններըմ այսպես կոչված հնչույթները, հետևանք են մարդու հատուկ աշխա-տանքի, նրա (լեզվի) արտադրման վրա կատարված կոլեկտիվ աշ-խատանքի, գրանք ստացված են հանրային աշխատանքի հետե-վանքով, ամենայն հավանականությամբ, կոլեկտիվ կամ խմբա-կան երգից» («Հարեմական տեսության հիմնական նվաճումնե-րը»):[1] «Գնդաձևական հնչյունի մարդկայնացումը կարող էր հա-

[1] Տես § 37:

նշից մի շարք օրինակներ, որոնք հաստատում են բուն մեթոդի ճգնաժամի պատճառը: Ընդունելով, որ նյութական հուշարձանների և լեզվի ստատիկական հետազոտությունները պետք է ընթանան ինքնուրույն ուղիներով, այնուամենայնիվ, ըստ Ա. Ա. Մելլեի, այս երկու ուղիների փոխադարձ կապը հանդիսանում է արդեն հաստատված և իր նշանակությամբ խոշոր մեթոդոլոգիական տեղաշարժի հիմնական նպատակը:

Զևակոցողը փորձ արեց քննարկելու մի շարք թեմաներ, որոնք ինքնուրույն կերպով մշակել է հարևթաբանությունը ըստ լեզվի նյութերի, մեջ բերելով դրանց համապատասխան լուսաբանումը նյութական կուլտուրայի տվյալներով: Զևակոցողը շոշափեց կուլտուրայի կազմվելու և զարգացման մոմենտները պատմական պարզաբանման, առանձնապես ուշադրություն դարձնելով 'ձեռք-քար-կացին' թեմաներին, pars, pro, toto-ի նշանակությանը ինչպես լեզվի պատմության մեջ, այնպես էլ հնադարյան մարդու կերպավարման գործունեության մեջ, 'բայազուրկ խոսքին' և նրան հնարավոր համապատասխանություններին: Հարեթական տեսության սահմանած իրենց բնույթով տարբեր սեմանտիկ շարքերը, ըստ Ա. Ա. Մելլեի, նույնպես իրենց համապատասխանություններն են դանում կերպարվեստի բնույթի նյութական հուշարձաններում: Ա. Ա. Մելլեը զեկուցումն ավարտեց Հյուսիսային-Կովկասյան երկրամասի մի շարք նշանավոր կուլտուրաների կազմելու պատմության հարցով, որոնք այժմ պարզվում են չափազանց մեծ քանակությամբ հետազոտված քաղաքատեների տվյալներով: Տեղական այդ կուլտուրաները, որ հաջորդաբար կազմավորվել են երկրամասում, բնականորեն հարցական նշան են դնում հետևյալ տրադիցիոն ֆորմուլայի վրա. «Թուրք-քոչվոր-մոնղոլացվելը իրենց ֆիզիկական տիպով Ասիայից եկվորներ են— ձին հետը թագելը» և այլն: Հիշատակելով Սարկել[1] տերմինի հարեթական մեկնաբանման նշանակությունը, զեկուցողը եկավ այն եզրակացության, որ չուվաշների բնիկ ուսումնասիրության վերջին տարիների աշխատանքները

---

1 Իշտարի մասին տպագրության (ՀԺ) պատրաստվող հոդվածում այս տերմինի մեկնաբանության վերաբերյալ կա նրա լեզվաբանական վերլուծության լրացուցիչ բացատրությունը (ՀԺ 5-րդ հատ. էջ 135) [Ընտիր երկեր, 3-րդ հատոր, էջ 323]։ Ն. Մ.։

ներում քան սոցիալական, դասակարգային լեզուն։ Մի խոսքով, մտածումը այսպես կոչված ազգային կուլտուրայի այնքան այն լեզվին, իրրև ամբողջ բնակչության դանդվածային մայրենի լեզվին, դիտական չէ և անել չէ, արտադասային, արտադասակարգային ազգային լեզուն առայժմ ֆիկցիա է» («Լեզվի ծագման մասին»)։

«58. Առանձնապես ճշմարիտ է սա կուլտուր-պատմական լեզվի վերաբերմամբ. «Վկայելով հարեվանական լեզվի կուլտուր-պատմական, հետևաբար, դասակարգային կամ դասային ստրածման մասին, շումերական ըրավեր լեզվի գյուտը վստահորեն մեզ կարող էր ուսումնասիրել հարեվանական լեզվամտության կազմից անտեսանելի հնդեվրոպական լեզվաստեղծության գործոնները, որոնց դերիշխանության մի կողմնակի ենթադրությունն էր նաև հնչական լեզվին ակրտապետելը, այն այն ժամանակ դեռևս մոդական նշանակություն ուներ» («Լեզվի ծագման մասին»)։ «Մի բան պարզ է, որ մատասների լեզուները այսոնց էլ հնդեվրոպական չէին, և որտեղ որ առաջացել է հնդեվրոպական լեզու, նրա կրողը միայն պրոշակի դերիշխող դասակարգն է եղել, դերիշխող դասը» (նույն տեղ)։

«59. Բայց լեզվի դասակարգային բնույթի վերաբերյալ դրույթը հարեվանական տեսությունը կիրառում է նաև ավելի վաղ հանրային ֆորմացիաների վերաբերմամբ։ Նա թույլատրում է դասակարգային շերտավորման գոյության նախապատմական հասարակության մեջ, որի հետ կապ ունի, օրինակ՝ հնչական լեզվի դասակարգային բնույթը։ Ն. Յ. Մառը խոսում է «նախապատմական կարգի իշխող դասակարգերի ախտերի մասին մոդության բոլոր տեսակներն իրենց ձևերում կինտրոնացնելով, որոնց դերիշխանության մեջացների թվումն էր նաև հնչական լեզվին ակրտապետելը, այն այն ժամանակ դեռևս մոդական նշանակություն ուներ» («Լեզվի ծագման մասին»)։ Փոխադրության մեջացներում» խոսվում է «նախապատմական ցեղերի», իրրև դասակարգային գոյացությունների մասին։

«60. Որքան որ հարեվանական տեսությունը հնչական լեզվի ծագումը վերագրում է աշելյան դարաշրջանին («Լեզվի ծագման մասին»), հետևաբար, մենք պետք է ենթադրենք, որ դասակարգային շերտավորում կար արդեն վաղ պալեոլիթի վերջում։

«61. Հարեվանական տեսությունը ձգտում է թուլացնել լեզվի, իր խոսքերով, դարգացման ներքին օրենքների նշանակությունը, ծանրության կինտրոնը ոչ միայն իմաստաբանության, այլ ձևա-

բանության մեջ վախտրելով լեզվական երևույթների՝ սոցիալ-անտեսական ֆակտորով պայմանավորվածության վրա. «Հարեթական լեզվաբանությունը երևան է բերել, որ իմաստաբանությունը, ինչպես և ձևաբանությունը, բխում է մարդկության հասարակության, նրա անտեսականության առաջացած պայմաններից» («Հարեթական տեսության մասին»): Առանձնապես վատ կերպով է այս սենսենցը երևան գալիս համեմատության ստուգաբանների ծագման սեմանտիկի մեջ. «Պարզվում է, որ քերականության մեջ համեմատության ստուգաբանները եղել են. սորինը, այսինքն պրականը՝ ստորին դասի անվան նշանածը, մինչինը՝ մինչին դասի, բարձրը կամ գերապրականը՝ բարձր դասի անվան նշանածը» («Հարեթական տեսության հիմնական նվաճումները»):

«62. Բայց երբեմն Ն. Յա. Մարի մոտ մենք գտնում ենք դեռ լեզվական մոմենտի ավելի մեծ ընդգծում: «Լեզվաբանությունը և նյութական կուլտուրան» հոդվածում նա ասում է, որ լեզուն պայմանավորված է սոցիալական մոմենտով միայն իմաստաբանության մասում: Լեզվի դեռ հնչյունաբանական և ձևաբանական օրենքների մեծ դերի ընդունմանը մենք հանդիպում ենք «Հարեթականներ»-ում. «Ըստ այսմ հնչյունաբանական և ձևաբանական առհասարակ դեռ լեզվական վերաբերումների հետ միասին հարկ կա հաշվի առնել հանրայնության համապատասխան բնապատմական զարգացումը և դոյի սոցիալական տիպերի վերաբերումը»:

«63. Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հարեթական տեսությունը կանգնած է պրոլետարիական մատերիալիզմի հիմնական պրոբլեմների հողի վրա: Լեզվաբանության բնագավառում նա անում է հենց այն, ինչ մարքսիզմն արել է փիլիսոփայության և սոցիոլոգիայի բնագավառում. նա լեզվաբանությունը իդեալիստական դլխի վրայից դնում է մատերիալիստական ոտքերի վրա: Հարեթական տեսությունը դիալեկտիկական մեթոդը մտցնում է լեզվական երևույթների հետազոտության մեջ: Հարեթական տեսությունը հիմնականում միանգամայն ճիշտ է որոշում լեզվի տեղը հասարակական հարաբերությունների սիստեմում:

«64. Իսկ ինչ վերաբերում է հարեթական տեսության միքանի պնդումներին, որոնք վիճելի են մարքսիզմի տեսակետից, որոնցից են լեզվական երևույթների վրա սոցիալ-անտեսական գործոնի անմիջական ազդեցության որոշ գերագնահատումը և

«նախապատմական դասակարգերի» դրույթը (թեզիաներ 55—61), ապա դրանց մասին պետք է ասել հետևյալը. «փայտի ծառմը» դեպի «էկոնոմիկան» անխուսափելի մեթոդոլոգիական եղանակով է, որչափով հարեթական տեսությունը այս տեսակետից միանգամայն նոր ուղիներ պետք է բացի և պայքարի հին հնդկերոպական լեզվաբանության դեմ, որի «ծառմը» հենց ճիշտ հակառակ կողմն էր Իսկ ինչ վերաբերում է հանրային դարպայմանվաղ սահմաններում դասակարգային շերտավորում թույլատրելուն, ապա այդ դրույթի մեջ մեթոդոլոգիապես մարքսիզմին հակասող ոչինչ չկա: Խոսքը վերաբերում է փաստին, և որչափով որ վերջին տարիներս պետության հավաքած նոր ընդարձակ նյութը հարկադրաբար սիրում է մեզ լայնացնել դասակարգային հասարակության սահմանները մինչև այժմ արտիկիայով թույլատրվածից ավելի, թերևս, անհրաժեշտ է վերաքննել Ենգելսի դուա փաստական պնդումը (թեզիս 28): Մյուս կողմից՝ հարեթական տեսությունը այս հարցում պետք է ճշտի իր տերմինաբանությունը. «դասակարգ», «ցեղ» և այլ տերմիններն իրենց սահմանված իմաստներով հարկավ թե կվերաբերվի լինեն նախապատմության երևույթների նկատմամբ:

«65. Մարքսիզմի և հարեթական թեորիայի մեթոդոլոգիական եզակետների նույնականության և բազմաթիվ առանձին պնդումների սերտ մոտիկության հետևանքով երկու ուսմունքների անխուսափելիորեն պետք է միավորվեն: Անհրաժեշտ է, որ հարեթական տեսությունը բացահայտորեն ընդունի մարքսիզմը, իբրև իր համապիլիստիական և սոցիոլոգիական հիմքը՝ մարքսիզմը՝ հարեթական տեսությունը, իբրև իր հատուկ լեզվաբանական բաժինը: Նուարեի հանճարեղ կռահումը չի կարող նման դեր խաղալ, որչափով որ այն միայն հիպոթեզ է, և որչափով որ այն դրծում է հնդևրոպական լեզվաբանության նյութով ու մեթոդներով: Նուարեի մի շարք հիմնական պնդումները միանգամայն անկախ նրանից, պարզացնում է Ն. Յա. Մառը դիտական լիակատար համոզչությամբ ու ապտիչ լայնությամբ:

«66. Մի հանդամանք ևս հրամայաբար թելադրում է ռեվիզիան մարքսիզմի ու հարեթական տեսության միավորումը Մինչդեռ «մեծապետական» հնդևրոպական լեզվաբանությունը իմպերիալիզմի տիպիկ արդյունքն էր իր՝ պաղտիական ժողովուրդների ու փոքր պղտիների կեղեքումով (Ն. Յա. Մառը «Հարեթական տեսության մասին»), հարեթական տեսու-

թյունը նույն չափով ծնունդ է պրոլետարական և գաղութային ուսուցիչների դարաշրջանի։ Այս տեսակետից հարեթական տեսությունը ոչ միայն կարևոր ուսմունք է, այլև բազմաթիվ «պրագուրկ» ժողովուրդների կուլտուրական ազատագրման մի հզոր զենք, որոնք ճնշված են ինչպես իմպերիալիստական պետության սպարտաով, այնպես էլ եվրոպական հին դիտության մեծամիտ արհամարհանքով»։

* * *

Ս. Ի. Կովալյովի առաջարկած «Մարքսիզմը և հարեթական տեսությունը» ամփոփ (միայն թեզերով) դեկուցման մեջ տեղ տեղ մենք տեսնում ենք, որ միանգամայն բնականորեն հաշվի չեն առնված մեր վերջին աշխատությունները, կամ դեռևս նույնիսկ հնաոքրքրվողների սեփականություն չդարձած, կամ մամուլում բոլորովին հանդես չեկած դեկուցումներն ու դասախոսությունները։ Սա առանձնապես վերաբերում է այն տեղերին, որտեղ խոսքը հնչական լեզվի ծագման մասին է, անմիջական կենդանական հնչյունի ենթադրվող մարդկայնացման մասին, որպես հնչական լեզվի արտադրության գործիքի, և որտեղ մեր նշած «զուտ լեզվական» մոմենտի ընդգծումով հանդերձ, ցույց է տրվում, որ նրանցում ընդունվում է զուտ հնչյունաբանական և ձևաբանական օրենքների մեծ դերը՝ վկայակոչելով «Հարեթականները» հին աշխատությունը։ Սակայն, ըստ էության Ս. Ի. Կովալյովի դեկուցումը աչքի է ընկնում իր կատարյալ ուշադրությամբ դեպի հարեթական տեսության տեսական դրույթները առանց անհարկի ջատագովության, բայց և առանց չմտածված պոլեմիկական մոմենտի, ինչպես հարեթական տեսության, այնպես էլ նրան հակադիր հին լեզվաբանական ուսմունքի նկատմամբ Այսպիսով, հասել է արդեն այն մոմենտը, երբ հասարակագետները իրենք են իրենց ձեռքը վերցնում լեզվաբանական ուսմունքը իրենց մասնագիտական պետերի տեսակետից դնահատելու համար։ Հետևաբար, հասել է այն մոմենտը, որին հասնելու ցանկալիության մասին ես բարբառում էի կարծես անապատում, «Հարեթական տեսության զարգացման փուլերով» հրատարակության ներածական էջերում։

Միաժամանակ այս հարցի առթիվ կազմվում են սպառիչ կարտոտեկաններ։ Բնական կլինի մեզ համար չշտապել տպագիր շարադրելու ծրագրի եղրափակիչ (51) պարագրաֆը, թեկուզ և

նա կարդացված լինի Ադրբեջանի համապատասխան կոչացած էպիզոդիկ դասընթացում:

Վերջից երկրորդ պարապմունքը (50), հիշատակված ծրագրի ամբողջ չկարդացված մասից իմ մեկնաբանման հանդեպ ակամա է ընկնել նուիրական դրության մեջ: Նորը վերաբերում է «Տարեթարանության հարաբերականության, մարդկության պատմության բուն նյութական կուլտուրայի հաւշարձանների հետազոտելուն» և այլն: Ես նկատի ունեի այս հարցը լուսաբանել միայն այն ոանհմանների, որոնց մեջ նշված է լեզվաբանական նյութի շաղկապման հնարավորությունը, այն է. բառերի իմաստի, նրանց կառուցվածքի, ձևաբանական, նաև հնչական երևույթների շաղկապման հնարավորությունը տնտեսության և նրա հետ պայմանավորված հասարակարգության՝ հասարակական ձևերի ու աշխարհայացքի զարգացման պատմության հետ: Հարցը մասամբ շոշափվում է դասընթացի զանազան տեղերում, չհաշված այնպիսի հատուկ աշխատությունների մասին, որոնք արդեն հիշատակված են. 1) «Փոխադրության միջոցները, ինքնապաշտպանության և արտադրության գործիքները՝ նախատոհմական շրջանում (լեզվաբանությունը նյութական կուլտուրայի պատմության հետ շաղկապելու առթիվ)», 2) «Մարդկության զարգացման լեզվաբանորեն նշվող գարշրջանները և նրանց շաղկապումը նյութական կուլտուրայի պատմության հետ», ինչպես և 3) «Շումերական tam-dam-ի հարեթական ծագումը», 4) «Խալդեների puli-ի ‚քար' և puli-ի ‚կրմուղ' մասին», 5) «Էտրուսկական մահվան աստծու Kalu անունը և 'գրել', 'երգել', 'աստղ', 'կուլտ-երգիչ'» տերմինները. 6) «Գիրք և գիր տերմինների ծագումը» և այլն:

Բայց ահա նյութական կուլտուրայի պատմության Ա. Ա. Միլլերը իր «Նյութական կուլտուրայի պատմության և լեզվաբանության շաղկապման մի քանի օրինակներ» դեկուցումով, որ նա կարդաց ընթացիկ տարվա հունիսին Հարեթական ինստիտուտում, առհմանից արդեն այլ կապ, այսինքն՝ հարեթական տեսության մի շարք դրույթները, մանավանդ և իմաստաբանության մասում. նյութական կուլտուրայի հուշարձանների նկատմամբ կիրառելու գործում ավելին մխանգամայն զոհացուցիչ լուծում նրանց առանձնահատկին ձևերին և գծված կիրառների համբնագիտանքներին: Ա. Ա. Միլլերը, ընդունելով նյութական կուլտուրայի ուսումնասիրման գոյություն ունեցող եղանակները,

նշից մի շարք օրինակներ, որոնք հաստատում են բուն մեթոդի ճգնաժամի սկսվելը: Ընդունելով, որ նյութական հուշարձանների և լեզվի ասպարեզում հետազոտությունները պետք է ընթանան ինքնուրույն ուղիներով, այնուամենայնիվ, ըստ Ա. Ա. Միլլերի, այս երկու ուղիների փոխադարձ կապը հանդիսանում է արդեն հաստատված և իր նշանակությամբ խոշոր մեթոդոլոգիական տեղաշարժի հիմնական նախապայմանը:

Չևկուցողը փորձ արեց քննարկելու մի շարք թեմաներ, որոնք ինքնուրույն կերպով մշակել է հարևթաբանությունը ըստ լեզվի նյութերի, մեջ բերելով դրանց համապատասխան լուսաբանումը նյութական կուլտուրայի ավյալներով: Չևկուցողը շոշափեց կուլտուրայի կազմվելու և զարգացման մոմենտները պալեոլիթի դարաշրջանում, առանձնապես ուշպրուբյան դարձնելով 'ձեռք-քար-կացին' թեմաներին, pars, pro, toto-ի նշանակությանը ինչպես լեզվի պատմության մեջ, այնպես էլ հնադարյան մարդու կերպավորման գործունեության մեջ, 'բայազուրի խոսքին' և նրան հնարավոր համապատասխանություններին: Հարեթական տեսության սահմանած իրենց բնույթով տարբեր սեմանտիկ շարքերը, ըստ Ա. Ա. Միլլերի, նույնպես իրենց համապատասխանություններն են դանում կերպարվեսաի բնույթի նյութական հուշարձաններում: Ա. Ա. Միլլերը զեկուցումն ավարտեց Հյուսիսային-Կովկասյան երկրամասի մի շարք նշանավոր այն կուլտուրաների կազմելու պատմության հարցով, որոնք այժմ պարզվում են չափազանց մեծ քանակությամբ հետազոտված քաղաքատեղերի ավյալներով: Տեղական այդ կուլտուրաները, որ հաջորդաբար կազմավորվել են երկրամասում, բնականորեն հարցական նշան են դնում հեռվյալ տրադիցիոն ֆորմուլայի վրա. «Բուրք-քոչվոր-մոնղոլացեղերը իրենց ֆիզիկական տիպով Ասիայից եկվորներ են— ձին հետը բազեը» և այլն: Հիշատակելով Սարկել[1] տերմինի հարեթական մեկնաբանման նշանակությունը, զեկուցողը եկավ այն եզրակացության, որ չուվաշերենի ուսումնասիրության վերջին տարիների աշխատանքները

---

1 Իշտարի մասին տպագրության (ՀԺ) պատրաստվող հոդվածում այս տերմինի մեկնաբանության վերաբերյալ կա նրա լեզվաբանական վերլուծության լրացուցիչ բացատրությունը (ՀԺ 5-րդ հատ. էջ 135) [Ընտիր երկեր, 3-րդ հատոր, էջ 323]։ Ն. Մ.։

մեծ չափով նպաստում են վերև մղ բերված փորմուլի կոթծանմանը և հիմք են տալիս բոլորովին այլ տեսակետ մշակելու Արևելյան Եվրոպայի դաշտային մասի կուլտուր-պատմական բնության նկատմամբ մինչև դարերում:

Պարզ է, որ այս վիկուցումը լրիվ չափով պետք է ունենալ ապագրված, որպեսզի ավելի լրիվ մեկնաբանվի դասընթացում բաց թողնված պարագրաֆի նյութը:

Ամենից քիչ է անհանդուրժելի այն, որ դասընթացի ընթերցումը չընդգրկեց հետև ծրագրի նախորդ պարագրաֆի (49) թեման, այն է «Հարևթական լեզվաբանության տեսության կապը հնդեվրոպական լեզվաբանության հետ և նրա կախված լինելը վերջինից իրեև լեզվի ուսումնքի պարզաբանման հետագա ուղի» և այլն: Նյութը վերաբերում է ոչ միայն հարևթական լեզվաբանության հիմնական դրույթները հակադրելուն, անկասկած իրեև անտեղի հնդեվրոպական լեզվաբանության հենց հիմնական դրույթներին, այլև այն բանին, թե ինչն է հին լեզվաբանական ուսմունքից պահպանում իր ակտուալ նշանակությունը նաև լեզվի նոր ուսմունքի համար: Կհամաձնք մենք դրան անձամբ թե ոչ, այդ ուրիշ հարց է, բայց հարևթաբանության կհամանի այն օրվան, երբ հնդեվրոպաբանները իրենք մեծ օգուտ բերելով թե դործին և թե իրենց՝ ձեռնամուխ կլինեն այդ շնորհակալ թեմային, նախևին ջանալով նախապես իրական պատկերացում ստանալ հարևթական տեսության թե փաստական և թե տեսական պնդումների մասին մինչև տեսել կերպով պարզաբանված նոր պրոբլեմների վերաբերյալ անվիճելի, վերջնականապես հիմնավորված դրույթների ու հիպոթեզների տարբերման աստիճանը:

Մնացած երեք պարագրաֆներից (46, 47, 48) վերջին երկուսը, հատկապես իմաստաբանությունը, որ լուսաբանվել է դասընթացի պահպան մասերում և իմաստաբանական դարաշրջանները, որ սերտորեն կապված են նյութական կուլտուրայի և հասարակայնության պատմության դարաշրջանների հետ, այժմ կարող են շրջանցվել առանց դործին վնաս պատճառելու մասամբ վերև հիշատակված հանդամանքներով, բայց չի կարելի բաց թողնել դրանց նախընթաց պարագրաֆը (46), առանց նրա բովանդակությունը պետք համառոտակի շարադրելու ավելի ևս շատ կողմնորոշվելու նպատակով, քան այդ տրված է ծրագրում:

Ա. Մեկից ավելի անդամ քաղված ծրագրի տեքստը սկսվում է այն դրույթից, որ «պանագան սխտեմների համեմատական քերականությունը սարքեր է յուրաքանչյուրի մոտ»: Սակայն սա միայն այն չափով, որ չափով մենք համեմատական քերականությանը մոտենում ենք ձևական մեթոդով, ելնելով այս կամ այն լեզվախմբի, այս կամ այն լեզվի ձևաբանական և հնչյունաբանական կանխատեսված կայունությունից:

ա) Եվ այս դեպքում հարևթական լեզուների շրջանում ոչ թե մեկ, այլ բազմաթիվ համեմատական քերականություններ կան, որովհետև ձևական հնչյունաբանական դասակարգումով մենք ամենից առաջ ունենք հարևթական լեզուների սուլաշչական ճյուղի երկու խմբի՝ սուլական և շչական խմբերի համեմատական քերականությունը: Սակայն եթե կանգ առնենք գեթ միայն այդ համեմատական քերականության վրա, բավական է նրա մեջ ներքաշվել ձևականորեն սուլաշչական ճյուղին մոտիկ դասվող սվաններին՝ հիբրիդորեն խաչավորված սպիրանտ—շչական և առավել ևս ձևաբանորեն բավական հեռու դասվող արխաղերենը՝ նույնպես հիբրիդորեն խաչավորված, սպիրանտ-սուլական, որպեսզի անզուսպ պահանջմունք զգանք կամ սահմանափակվելու միայն սվաններեն լեզվի, նրա առավելապես շչական շերտի, և արխաղերեն լեզվի սուլական շերտի համեմատությամբ, առանց հաշվի առնելու նրա ձևաբանությունը, որպեսզի ամբողջովին դուրս չգանք սուլաշչական ճյուղի համեմատական քերականության նորմաններից, կամ ձևական համեմատական մեթոդը բարդացնենք ոչ միայն սվաններեն լեզվի սուլաշչական ճյուղի հետ հնէաբանորեն սահմանվող կապով, այլև արխաղերենի հետ, որ ձևաբանորեն անդունդով է բաժանված վրացերենից, մեգրելերենից և նույնիսկ սվաններենից, համարյա ֆլեկտիվ կառուցվածքի լեզուներից, որովհետև արխաղերենը այս տեսակետից անջատական է և համադրական: Այնուհետև ըստ նույն ձևաբանական ձևական դասակարգման, ունենք դերանվանական կառուցքի լեզուների համեմատական քերականություն համադրական և կցական խմբերի հետ, բայց այս համեմատական քերականությունը անխզելիորեն պետք է բացատրվի հնէաբանորեն, անհրաժեշտ է հրաժարվել այս կամ այն ձևաբանական կառուցվածքն իրրև կայուն ընդունելուց, մի խոսքով, ստացվում է բազմիցս պարբերաբար այն դրույթը, որ հարևթական լեզուներում ձևական մոտեցման դեպքում կա ոչ թե մեկ, այլ մի քանի սխեմա այն

առանձնահատկությամբ, որ տարբեր ախտեղիներով հիշատակված են կապակցված մեկտեղ հետ, հիշատակված է հնէաբանական առհասարակ նրանց դիտելիքի բնույթը: Այս է հենց բոլոր հաբեթական լեզուների էական առանձնահատկությունը:

բ) Զանազան ախտեղիների այս փոխհարաբերությունների վատատեսը երկրորդ հաբեթական լեզուների ներսում և համապատասխան նյութերի մշակումն էլ հենց մեզ ինչպես նյութական, այնպես էլ գաղափարախոսական հիմք պիտի զանազան ախտեղիների, կամ զանազան ախտերի լեզուների համեմատական քերականության համար, նախ մշտապես անխուսափելի կերպով հնէաբանական վերլուծության հետ, այսպես առաջին հերթին մշակվող հաբեթամիջերկրածովյան (հաբեթա-հունա-լատինական), հաբեթա-հայկական, մասնավորապես աշխատանքի մեջ առավելապես առաջ գնացած հայ-վրացական համեմատական քերականության համար, կիրառելով երկրորդ պարզաբանվող հնէաբանությունը, և աշխատանքի մեջ գտնվող անպայման հնէաբանական կառուցումը նոր ավելած առհասարակ հաբեթա-պրոմեթեիդական («հնդեվրոպական»), հաբեթական-ալպանական (ուրալա-ալթայական), հաբեթա-չինական և այլ համեմատական քերականության համար:

գ) Բնականաբար, համեմատական ձևական քերականությունների յուրաքանչյուրի սեխանիկական եղանակները ինչպես և յուրաքանչյուր ախտեղի լեզուների դասակարգումը յուրաքանչյուր եղ:

Պարզ բան է, որ հաբեթա-չինական համեմատական քերականության դեպքում ձևաբանական հատկանիշները պետք է անտեսվեն, այլև հնչյունական հատկանիշները պիտի անցնեն երկրորդ պլանի վրա: Գլխավոր աշխատանքը պետք է կատարվի բառարանի, իմաստաբանության և շարահյուսության վրա: Բնականաբար, այդ համեմատական քերականության հնարանքները պիտի գլխավոր դեր է խաղում հնէաբանական ձևական և գաղափարախոսական վերլուծությունը ըստ էլեմենտների:

Բնականաբար, այն լեզվաբաններին համար, որոնց խորթ է լեզվական փաստերի հնէաբանական ընկալումը, որը երևան է բերում զանազան ախտեղի լեզուներում փոխադարձ կապակցությամբ սխանգամայն կոնկրետ վկայություններ, նման մերձեցումների փորձն ինքը նախապայմանում է իբրև «անմեղադրելի» հոլջոլման գաղափարախոսված: Համապատասխան շրջապատում չի

դրայվում այն փաստը, որ զանազան լեզվաբանական սիստեմների մերձեցման փորձերը դատապարտելու վճռականությունն ինքը վկայում է ինչ որ ավելի վատթարի մասին, քան մեթոդի բացակայությունն է,— այն վկայում է աշխատողների ինքնադատապարտման մասին. նման «զրոյ մեթոդով» երբեք չի կարելի հասնել լեզվաբանական հետազոտության իսկական մեթոդին Ել մեր մեջ կիսաթոզանաթ խորացույն տարակուսանք հարուցել այն հանգամանքը, թե ինչպես է իր դարն ապրած հընդեվրոպական տեսությունը հատուկ մեթոդի այդպիսի գնահատության հարում մատամբ նաև Մայնհոֆը (Meinhoff) անվերապահորեն[1], եթե դրանով մենք հնարավորություն չունենայինք լուսաբանելու մեկնության անձնավորության մեջ շարունակ հակասությունը՝ նրա դավանած դպրոցական տարիքում յուրացրած հին տեսության և ներքին կենդանի լեզուներին նկատմամբ նրա փաստական աշխատանքից բխող կենդանի առնչություն մասին, դեռ ավելին, լեզվի նոր ուսմունքի, նրան բոլորովին անծանոթ համեմատական տեսության դիտական դրույթների միջև։ Թեկուզ և հենց միայն հետևյալ դիտքից միանգամայն արդյ է, որ Մայնհոֆը փաստորեն դանվում է իրոք այն ուղու վրա, որ բացել է համեմատական տեսությունը և ընդունակ է առաջ ընթանալու, այսինքն՝ լեզվափաստաճների կայուն ընկալումից անցնելու նրանց հնչարանական մեկնաբանմանը, զանազան սիստեմների լեզուների շաղկապմանը։ Անհավասիկ այդ դիտքը նրա ձևակերպումով. «Առաջ ես էլ էի վիճարկում Բանտուի ցեղակցությունը քամական լեզուների հետ։ Այժմ դա ես անվանում եմ նախաքամականդ[2]

Ծրագրի թվարկության մեջ որոշ թերություն կա, որովհետև առանձին չի անվանված ուղղո-ֆիննական խումբը, բայց դա մեծ բան չէ, քանի որ պրոմեթեիկան, ալդանական լեզուներից հետո ասված է «և այլն», ապա անխուսափելիորեն պետք է ենթադրել նաև ֆիննական, հավասարապես ուղղական լեզուները։ Լուրջ է մատնված նաև միայնության մեջ առանձնակի դանվող չուվաշերենը, մինչդեռ չուվաշերենի փոխհարաբերությունները հարեվանական լեզուների հետ պահանջում են

---

[1] Was Können uns die Hamitensprachen fur den Bau des semitischen Verbum lehren, Zeitschrift für Eingeborenen-Sprachen, Բեռլին, 1922, էջ 241—242։

[2] Հիշ. աշխ. էջ 242։

բայաոիկ ուշադրության և նախնական մշակում, որպեսզի ամեն մի ճիշտ համեմատական ուսումնասիրության ենթարկվեն ոչ միայն ֆիննական և ուգրական լեզուները, այլև մոնղոլները առանձնապես, որչափով որ անկախ հարեվանական անմիջական հետաքրքրության դոյության ունի նրա ոչ ամբողջովին նշմարվող վոխհարաբերությունները դեպի Թուրքերենի հետ, որին մոտիկ է կանգնած չուվաշերենը։

ա) Ձևական հնչյունարանական դասակարգման հիմնական եղանակը երկու խմբի, այսպես կոչված սուլական խմբի և շշական խմբի հնչյունական համապատասխանությունների հաշվառումն է։ Հիմնական համապատասխանությունների թվարկումը արդեն տրված է (§ § 23—24), դրանց թվում կա cc s ‖ ıı, ıı որը, սակայն բնավ չի նշանակում թե ճիշտ հակառակ cc ıı համապատասխանում է, ıı s և այլն։

Սուլական խմբի լեզու, ինչպես սովորաբար ասվում է, միայն վրացերենն է՝ իսկ շշականը երկուսն են՝ մեգրելերենը և ճաներենը։ Այս է դրությունը ներկայումս, իսկ եթե նորմա ընդունենք ներկա դրությունը, ապա թերևս, շշական խմբի լեզուներ բոլորովին չկան, որովհետև շշական խմբի երկու լեզուներից ճաներենը ճաների համար երկրորդ առանձին լեզու է թյուրքերենի կողքին, իսկ մեգրելերենը մեգրելների համար առանձին և առօրյա լեզու է վրացերենի կողքին, ընդորում հասարակաբանորեն մեգրելերենը վաղուց քշված էր դյուղացիական միջավայրը այն կապակցությամբ, որ margali-ko՞ı ‘մեգրել’ բառը Մեգրելիայում իսկ հասկացվում էր ‘դյուղացի’ իմաստով։ Այս իմաստով վրաստանի հասարակական գործիչները թերևս իրավացի էին ասելով, որ մեգրելական լեզու չկա, որ այսպես կոչված մեգրելերենը աղավաղված վրացերենն է։ Եվ պատահական չէ, որ խոսվածքները և որոշ բարբառներ (այսպես ինգիլոյերենը և պարսկական վրացիների բարբառը կենցաղում ընդունված է համարել աղավաղման ենթարկված աղնիվ լեզու։ Վրաստանում, բնականաբար, իբրև աղավաղված վրացերեն,— դա միանգամայն որոշակի հասարակայնության հայացքների արտացոլումն է։ Եվ իրոք, ինչ խոսվածք էլ վերցնելու լինենք, բոլորը ծնացուկ են որևէ ինքնուրույն լեզվի։ Ըստ առկա խոսվածքների, Վրաստանի տերիտորիայում կային տասից ոչ պակաս լեզուներ, որոնցից մի քանիսը բնավ վրացերեն չեն եղել, կամ նույնիսկ նրան մոտիկ տպակից, մյուսները վրացերեն

չլինելով սակայն, եղել են վրացերենի հետ ընդհանուր սուլական խմբից և այլն: Ճիշտ է, Կովկասի քարտեզի վրա իրար տեղ էլ չկա այդ թվով թեկուզ և սուլական խմբի դանագան լեզուների համար, եթե դանագան լեզուներ համարենք սոսկ տերիտորիալ կերպով տեղաբաշխված, բայց սոցիալականորեն ներկայացված տարածությունը հաշվի առնելիս պատմական վրաստանի նույն տերիտորիայում բավականաչափ տեղ կա սուլական խմբի մի այլ լեզվի համար ևս, այն է՝ հին գրական լեզվի, որովհետև վրացերենը մեկ լեզու չէ, այլ երկու՝ ֆեոդալական, հին գրական և մատաղական, ավելի ճիշտ մատաղական, ժողովրդական դարձած լեզու, որ հետագայում առաջ է մղում հասարակական յոյն դերծածության՝ վրաստանի մանր ազնվականության և բուրժուազիայի, մի[ջ]նադարյան մանր քաղաքների բնակչության կողմից: Համանարար միևնույն ազգի բարձրագույն հասարակական երկու լեզուների տարբերությունը նշանակելի է, որքան էլ այդ թուլացած լինի «լեզուների փոխադրելության»: Իսկապես ակզբում մահացած հին ազնվականության դերիշխանության, որը բնավ էլ «էթնիկապես», resp. սոցիալապես նույնական չէ քարթվել-վրացիների հետ, այլ իբերների, նրա հետ միասին մահացած լեզվով, և հետագայում դերիշխող դիրք գրաված մանր ազնվականության և մանր քաղաքների բուրժուազիայի դերակշռությամբ, 19-րդ դարից կալվածատիրական ազնվականության դերակշռությամբ, որ հետագայում ավելի ու ավելի ընկավ, և դյուղացիության ու [բանվորների դերակշռությամբ:

Իբրև վրացերին հիշատակված երկու լեզուների տարբերության օրինակ բավա[լան է իմանալ հոգնակի սեռական կապությունը (հին գրական n-ı, ժող. -eb-ı):

Կյանքան ժողովրդական	Համարյա թեքական, հին գրական
Ուղ. ka ǯ -eb-ı	kaǯ -n-ı
Սեռ. kaǯ -eb-ıs	kaǯ -ϑ[a]
Տր. kaǯ -eb-s[a]	
Տր. II kaǯ -eb-m[an]	kaǯ -ϑa-mier
Գործ. kaǯ -eb-ıϑ	
Ուղղորդ. kaϑ -eb-a+d	

Ինարկի կան նաև ուրիշ չափազանց էական տարբերություններ թե ձևաբանության և թե հնչյունականության մեջ (տմմա. զ, y և w հին պրական հնչյունները) և նույնիսկ բառապաշարի մեջ, որը նշանակալից չափով ընդհանուր է դարձել առանձնապես շնորհիվ նկատելի, ավանդական պատմական-տնտեսական-կուլտուրական-կալվածատիրական լեզվի և, ի հարկե, նաև պրակտիկայի բայց և այնպես, բավական է հիշատակել հետևյալ դեպքերը, երբ պահպանվել են իրար հին պրական բառեր.

Հին պրակ. (Ֆեոդալների լեզուն)	Ժողով. (մանր. բուրժ. և վուլգար)
m-ġolo ‘մխանոցի’	erȣad erȣ-ı
ġolo ‘սակայն’ ‘բայց’	marto
aramed ‘բայց’	էնկլխա. kı
ȣġem ‘պլխատուկ տեղ; ‘լեռնային կամ բարձր տեղ’ ‘գլուխ’	ȣav rom rogor
rayȣa → raȣa ‘արտերգի’,	ravarȣ rogorȣ
viȣar ‘ինչպես’	roȣ a
viȣarȣ a ‘ինչպես էլ’, ‘հենց որ’	rodesaȣ
viȣarȣ a, o-des երբ	daınaġa
ıġıla ‘տեսակ’	

Թվում է, թե առանձին պետք է նշվի մխայն շարահյուսական մի երևույթ, այսինքն՝ հին պրական լեզվում որոշիչ հոդի, իրար դեբանվան տակությունը որոշիչ հոդի դերում և կատարյալ բացակայությունը մատանների անցյալում դյուրացիության, տանը քաղաքների բնակչության և այլոց լեզվում, որը պարզվում նոր պրական:

Մեռ. kaȣ ısa mıs	և kaȣ ısˈaˈ ‖ kaȣ -ıs
Տր. Krmasa mas	kramasˈaˈ ‖ km-as
Ներկ. Krmıȣa mıȣ	krmıȣ ‖ km-ıȣ

Հոգնակի թիվ

	kaȣ -n-ı ‖ kaȣ -eb-ı
Ուզղ. kaȣ -n-ı ıgı	kaȣ -ȣˈaˈ kaȣ -eb-ıs, kaȣ -eb-sa
Մեռ. Տր. kaȣ -ȣa- maȣ	և այլն:

Մ[յ]նադպության աշխարհիկ գրական լեզուն, նոր պետականության լեզուն է— mas kaʒsa, mas krma-s ասյլն:

Այս երևույթը, որ հին գրական լեզուն անջատում է ամեն մեկն շարունակությամբ, ձևարտոլեն ամենից առաջ նրան ժառանգում է Հայաստանի ֆեոդալական լեզվին (գրաբարին), իսկ այնուհետև առևտրական դերանվանական— կյանքի կառուցվածքի հարևթական լեզուներին, որի մասին հատկապես կխոսվի հարևթական լեզուների քոս ձևական հատկանիշների դասակարգելիս:

ը. Հարևթական պրոմևթևդական քերականությունը, որ բավական վաղ է սկսել մշակվել, սկզբում հարց առաջադրեց հայերենի[1] մասին, որովհետև վազուց սկսել էր պարզվել, որ Հայաստանում բազմաթիվ լեզուներ են եղել, որոնք այժմ իրեն ճեպազրներ առկա են բավական շատ խոսվածքների և բարբառների մեջ, որոնցից մի քանիսը, օրինակ, զոկերենը, մինչև այժմ էլ իրոք ինքնուրույն լեզուներ են, և այժմ Հայաստանում հոդևոր կարմուհյան տեսակետից ոչ թե մեկ լեզու կա, այլ երեք՝ քեռական (գ), որը հին գրական, ֆեոդալական (գրաբար) լեզուն է և բնական (ր), նոր գրական (աշխարհաբար): Ավարտվեց նրանով, որ Հայաստանի այս երեք լեզուները համարվեցին ձևաբանական—ձևական հատկանիշներով յուրաքանչյուրը հատուկ սխեմի պատկանող, մեկը՝ քեռականը՝ թևթևան, մյուսը՝ բնականը՝ կյանքի, ընդհանուր առմամբ նրանք միաժամանակ պարզվեցին իրեն հարևթական սխեմեից պրոմևթևդականին անցնողներ, սակայն բնավ չէր բացառվում գրանցից յուրաքանչյուրի խաչավորման հնարավորությունն ու փաստը: Գրանց խաչավորումը տարբեր է. մեկն առանձնացել է մինչև երեք տեսակից յուրաքանչյուրի ավարտումը, մյուսը՝ ավարտելուց հետո, չխոսնելով այն մասին, որ հանձին հայերեն քեռականի, այսինքն գրաբանի, որ սկզբում ու երկար ժամանակ սուրբ գրոց լեզու էր, և հայերեն «ժողովրդական», վուլգար բնականի, որ գրեթե մինչև 19-րդ դարը գրի չէր առնված, բայց աշխատավոր դասակարգերի, գյուղացիության և արհեստավոր-բանվորների, առհասարակ արտադրական կոլեկտիվների լեզուն էր, նույնպես ազդել են միմյանց վրա և խաչավորվել միմյանց հետ: Իրեև տիպիկ օրի-

---

[1] Ն. Մառ, Հարևթական տաքրերը Հայաստանի լեզուներում, ԳԱՏ, 1910—1920:

նակ հիշատակենք քեսկան լեզվով բնական տողնակի վերջավորության յուրացումը պյուռացիական կինցաղի մի շարք առարկանների անուննների մեջ. այսպես «էշեր» ш+ēar eш-ից պրարաբ, կամ քեսկան *ėш-q:

գ) Համապատասխանությունների հնչյունարանական-ձևական օրինքների վրա է հիմնված հարեթական լեզուների համեմատական քերականությունը սեմական սխեմեի հետ: Սեմական սխեմեի լեզուներում մենք ընդհանուր առմամբ չենք պոնում դերանվանա-կցական կառույցքի միացուկներ առանձնապես այն չափով, որ չափով արաբերենի քերականության նկատմամբ պահպանվում է այն հայացքը, որ նա համասեմական երևույթի միացուկ է, և որչափ մասնավորապես արամեական լեզուների, այս թվում նաև ասորականի կառույցքը չի առաջադրվում իբրև զարգացման ավելի հին ստադիայի միացուկ, իբ բացառիկ դերով ավելի համապրական ձևի հոլովները գոյացնելու մեջ, ինչպես դրեթե նաև հրեականում:

Վրաց.	Արաբ.
Ուղ.— -ı	Ուղ. -u, un
Մեռ.—ıs ‖ բարբան միացուկ -ın-ı	Մեռ. -ı, -ın
Տր.+Հց.-sa, resp--as ‖ -an	Հայց. -a -an

Լեզվի հնէաբանության ասպարեզում է, թե ինչ չափով է հարեթական և սեմիտական հոլովումների, բուն վրացերեն և արաբերեն հոլովումների նմանության հետևանք այն ձևերի հետագա զարգացման, որոնք միատեսակ կամ տարբեր ծագում ունեն: Սակայն փաստն այն է, որ նմանություններն այնուամենայնիվ պատահական չեն:

Սակայն մենք պետք ենք դնել մի այլ պարզաբանություն, լեզվի նոր ուսումնքի համեմատական քերականությունների դասընթացի մեջ: Սա առանձին: Միայն մի նախազգուշացում. հարեթա-սեմիտական համեմատական քերականության մեջ հնչյունական համապատասխանությունները ըստ էության նույնն են, ինչ բուն հարեթական լեզուների ներսում զանազան խմբերի ու ճյուղերի միջև հարաբերություններում, ինչպես մասամբ կարելի էր նկատել այն օրինակներից, որոնք վաղուց բերված են դեռևս «Նախնական հայերգում վրացերենի և սեմական լե-

դունեի ցեղակցության մասին»[1] *հոդվածում, բայց, ինարկե, այնքան հին ժամանակների համադրությունները պահանջում են արմատապես վերաքննել և մշտապես հնէաբանական տուեալներ ննջարկել թե՛ ձեւական և թե՛ դաղափարախոսական վերլուծությունը չորս տարրերի օգնությամբ. օրինակ՝ հաբեթա-սեմական համեմատական քերականության մեջ հնչյունական համապատասխանության այսպիսի օրինակը՝ հար. s—— սեմ. h(→γ), ինչպես վր. srba 'վազել' (srb+o-la 'արշավանք կատարել') և արաբ. γa-raba, 'փախած' իմարկի, պահպանում է իր ուժը, ինչպես նաև այն յուցումը, որ սուլական սուլաշշական s հնչեղացել է նաև վրացերենում. srb—*hrb→ᵉb, այստեղից s-ı-rbın-→sı-rb-ıl-ı 'վազք' rb+ı-s 'վազում' է բայց այժմ սա քիչ է։*

*Հնէաբանական վերլուծումը հաստատում է, որ 'վազել' ընդհանուր հաբեթա-սեմական արմատը, որ կենցաղում վեր է ածված հատարազաձայն շարյան srb—ʃhʅrb→rb, հանդիսանում է երկու տարրերի խաչավորում (AB)—sr-b—γr-b→sr-bl—*hr-bl, *ըստ որում խաչավորված տարրերից յուրաքանչյուրը նշանակում էր իրրև բայ նաև 'վազել', ըստ լեզվի հնէաբանության, ծագած լինելով համապատասխան անունից, այսինքն ջրից+ դեպից, որ ասել է թե այդ տարրերից յուրաքանչյուրը նշանակում էր և՛ ջուր+ դեպ. այսպես* sur (→su) resp. *վոլ.— կամայի ֆին.* ıuur *'դեպ-ջուր (→ չվ.* ıuu' *ջուր—բակ. 'ջուր' hur և այլն)։*

---

[1] *Հին վրացերեն քերականության հիմնական աղյուսակներ վրացերենի և սեմական լեզուների ցեղակցության վերաբերյալ նախնական հաղորդումով Սալմ. 1908։ Նախնական հաղորդումը վերահրատարակված է Ն. Յա. Մառի «Հաբեթական տեսության պարզացման փուլերով» հոդվածների ժողովածվում, էջ 8—30 [Ընտ. երկ., 1-ին հատ., էջ 23—38]։*

ฉบับอนุบัณฑิตยสถาน ๒๕๑๗

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ո՞ւմէ՞ն կ՚արդեօք հիմա այնպիսի վերացական թեմաներով զբաղվելու, ինչպես «Լեզուն և մտածողութիւնը». վերթռած ձեռնարկումների այս էպոխան, կոլոնտեասյին շինարարութեան վերելքը համաշխարհային նշանակութիւն ունեցող հեռանկարով և դասակարգային պայքարի ծայրահեղ սրման բորբոքումով, ոչ թե սոսկ հայեցողական կամ խրատական փիլիսոփայութեան, այլ ՍՍՌՄ ժողովուրդների ազատագրման և ամեն չափի (կալիբրի) մեծապետականութեան վերացման ակտերի և ներգործուն ձեռնարկումների փիլիսոփայութեան էպոխան, հակառակ կապիտալիստական իդեալիզմի և նացիոնալիզմի՝ մինչև շնչասպառ լինելը կռվող ճնասարսափական տարբերակների (разновидностей) բոլոր ջանքերի և խորամանկութիւնների, երբ կուլակը և նրա պաղտարտախոսական բոլոր դաշնակիցները, մի ուղ դանդաղ քելքով, մի ուղ վճռական հարձակմամբ, ինչպես բոլոր ֆրոնտներում, նույնպես իդեոլոգիականում, առնչ մեր դեմ են հանում, թվում է թե, մեր բանակաժներից կազմված ֆալանգներ։ Կուզի այնպես է սրվում, որ ըստ արտաոհմանյան ձեռնհաս մի դատավորի վկայութեան, նույնիսկ ամենից «խաղաղ» (pacifique) պետական աշխատավորը՝ սովետական դետնականը չի կարող մեր սովետական մտածողութեան բոլոր մեզ համար անբաժանելի հատվածներում,—պետական, հասարակական և քաղաքական,— յուր ունեցած անվերապահ համոզմունքի ամբողջ խորութեամբ չասել, որ այսպես մոմենտում դետնականի չեզոք լինելը ինքնասպանութեան է, հանցագործութեան։

Ընկերներ, «Լեզուն և մտածողութիւնը» իմ ելույթի հատվածում, երևան, քառասուն րոպեում, նույնիսկ մի ժամում անդավոթվելու տեմպով, ոչ այլ ինչ է, եթե ոչ ձեռնարկութիւն մի խնդրի, որը մտքի մեջ հոգս է հավաքում, այնինչ հարցը վերաբերում է լեզվաբանական տվյալներին և այն էլ լեզվի նոր

ուսմունքի հիման վրա, որը գլխին է ծանրի, կամ ծանրի և թշնամական տրամադրությունների՝ ներազանգատիս անճոռնաչելիության չափ տպավորված լուսատուների մասին։ Առանց կրճատելու էլ իմ զեկուցումը (այժմ սահմանափակվում եմ միայն, հատկապես սկիզբը և վերջը կարդալով) չի շոշափում բուլոր կողմերը։ Հարկ եղավ զեկուցումը դարձնել պրոբլեմի մի կողմին՝ լեզվի, ինչպես և մտածողության առեղծման պրոցեսի համաշխարհային ընդգրկմանը, և այս կապակցությամբ այդ երկու կատեգորիաների՝ լեզվի և մտածողության սահմանումը (установления) տալով գաղափարների կռվի պրոցեսում՝ սկսած իննսունական աշխարհից գալիլեյի։

Սակայն ով համարձակություն կունենա հաստատելու, որ լեզուն մեզ մոտ, մեր մեջ, վերապրման մասերից է, որ մտածողությունը, առանց որի մենք լեզու չենք էլ ընդունում, մեզ մոտ սոցիալական շինարարության այս հատկապես պայծառ, ուժերի անձնվիրաբար անողոք լարվածությամբ պայմանավորված (переживаемые) օրերում չի հանդիսանում բացառիկ արժեք։ Չէ՞ որ մեր մտքերի, մեր հստակ (четкое) դիալեկտիկա-մատերիալիստական արված մտածողության շնորհիվ, երբ հաջողվի սրբագրել նրան և իրականացնել սեփական մտածողության կոնկրետ նյութի նկատմամբ, առեղծագործական տեսական-գիտական մտածողության շնորհիվ է հենց, որ մեր լեզուն ոչ մի բանով չփոխարինվող նշանակության (значимость) է ձեռք բերում մեր աչքի առաջ ծավալվող դասակարգային դաժան կռվի բոլոր ճակատներում մեծամասնակի։ Լեզուն յուր ծագմամբ ընդհանրական, իսկ հնչական լեզուն առանձնապես, հենց նրա համար է «կուլտուրական վերելքի հուժկու լծակ» հանդիսանում, որ դասակարգային կռվի անխուսափելի պատճառ է։ Գնում եմ այսպիսի առումի պատասխանատվության լրիվ գիտակցությամբ և արհատապես զատվելով (расходясь) իմ շատ ընկերներից, որ չկա լեզու, որը դասակարգային չլինի և հետևաբար, չկա մտածողություն, որը դասակարգային չլինի։

Բայց սոցիալիստական շինարարության մեր օրերում գիտակցական կոմունիզմի նպատակասլացությամբ, անդասակարգ հասարակության համաշխարհային միասնական տնտեսության նպատակասլացությամբ, մեր աշխարհայացքի սկզբունքներն առանձնական (единичные) փաստերից և կնճռ-առեղծագործական անվերջ սրակներից ու հատկություններից ամբողջի մա-

անբի փոխազդեցությանը վերաբերելու նախապատրաստության համար, որպեսզի ամրապնդանության մեջ է, որ իրենց որոշումն են գտնում և որպեսզի փոփոխական վերաբերությունների մեջ են իրենց հատարակական արժեքը՝ նշանակությունը գտնում նրանք, ևրև լեզուն հանդիսանում է շարժարեր փոխը հատարակության վերնաշենքային կատեգորիաների ընդգրկում, որի (հատարակության) կառուցումը ձգտում է ընդգրկել և կազմակերպել ամրապնդ Միության մեջ, ամրապնդ աշխարհում գրված արտադրական աշխատանքային ուժերը, իսկ մտածողությունը այս կամ այն իմաստավորումը, այսինքն ուղղություն և գիտակցական ռեհանիկա է տալիս այս շարժարեր վերին՝ լեզվին, ապա ինչպես որ պահպանվ մտա, գործարանում, չհասկացողը չի կարող աշխատել առանց թափանցվելի գոհ դառնալու վտանգի, ինչպես որ արհեստից չի կարելի օգտվել առանց համապատասխան պրոֆեսիայի, այնպես էլ մեր ժամանակում չի կարելի, առանց սեփական գործին ճշտանվելու և քշնամական գործին օգնելու վրկի, նպատակահարմար կերպով օգտվել դասակարգային կռվի այնպիսի հուժկու, երկայրատուր գործիքից, ինչպիսին է լեզուն՝ չտիրապետելով նրա իսկական տեխնիկային, և ոչ թե ձևական երևույթին, հետևաբար չտիրապետելով նրան տեսականորեն, նրա ֆունկցիոնալ էությանը՝ ամրապնդության և մասների մեջ:

Ով որ երես է դարձնում (чурается) լեզվի նոր ուսմունքի հաջողություններից մտածողության՝ նրա նվաճած պատմական անալիզի բնագավառում, ով համառ կերպով չի ուզում տեսնել այդ անալիզի թափանցման աստիճանը մտածողության տեխնիկայի ստղծային վիճակի մեջ, նա իրեն զրկում է գործիքից կոնկրետ մատերիալի վրա աշխատելու մեջ և՝ գիտակցաբար գինաթափ անելով իրեն նաև կուլտուրական ֆրոնտի այնպիսի կորվածքում, ինչպիսին է հակաֆրոնական պայքարը:

Այսպիսի գենք ունենալու դեպքում հարկ չի լինում հատկապես ամրապնդին այնպես վոնգելու մեկ գիրքից, որ նրան հնարավորություն տրվի մի ուրիշը կամ երրորդը գրավելու. սրանով գինվածը կարծես քիմիապես լուծում է ամենայն կրոնի, կրոնական ամենայն հավատալիքի ամեն տեսակի հիմնավորումը հավատարատես: Այս պայքարի մեջ հարցը ո՛չ թե «աստված», «սուրբ» և նման ֆետիշացված տերմիններին է վերաբերում,

այլ նրանց արտադրական և հանրային առաջատար ֆունկցիաներին և հատկապես այդ ֆունկցիաների փոխհարաբերություններին։ Ո՛չ թե այն է վտանգավորը մեր հասարակության համար, որ մեկն ու մեկը կարտասանի „спасибо“ („спаси бог-ից ‘աստված փրկի’) կամ թեկուզ „слава богу“ (‘փառք աստծու’), այլ այն, թե ի՛նչ տեղ է հատկացնում նա ֆետիշացված և փոխառնությամբ (հետատեղափոխված) ասելիներին։ Ոչ մի հակակրոնական կամ մարտնչողի մոքրով չի անցնել Թբլիսիի բռնել ուս մարդուն, երբ մալաքիայի պարապիից աստաղելով, նա ասի меня лихорадит ‘ինձ դողացնում է’, կամ շոգի ժամանակ, ‘շոգում եմ’ ասելու փոխարեն “il fait chaud“ ‘ինձ շոգացնում է’, անձրևի ժամանակ ‘անձրև է գալիս’ ասելու փոխարեն “il pleut“ ‘նա երկնքից թափում է’ ասող ֆրանսիացուն, ինչպես է նաև փոխանակ ‘անձրև է գալիս’ „es regnet“ ասող գերմանացուն և այլն, թեև այս բոլոր այսպես կոչվող անդեմ բայերը՝ ռուսական „меня лихора́дит“, ֆրանսիական „il fait chaud“՝ ‘շոգացնում է’, ֆրանսիական „il pleut“, գերմ. „es regnet“՝ ‘նա թափում է երկնքից’ շփոթ են առաջ բերում այժմ, երբ բացառիկ բայեր, քանի որ արտահայտելով աստղական կամ բնության վիճակը՝ նրանք, հակառակ մեր մտածողության ակնկալությանը, ձևավորված են իրև ներդրծական բայեր, և այդ ստիպում է մեզ տրամաբանական քերականություններ կազմողներին դրանց «անդեմ» անվանելու, այնինչ իսկապես այդ դեմքը, երրորդը, կա, բայց այդ դեմքը ռուսերեն է՝ նա (он, она, կամ оно), երևիթի արտադրական առեմը. ռուսական „меня лихорадит“ բայի մեջ դա տկարության ոլին է, ֆրանս. „il fait chaud“ ‘նա շոգացնում է’ բայի մեջ՝ ‘աստված-արևը’ (le soleil), գարձյալ ֆրանս. il pleut, ինչպես և գերմ. es regnet ‘նա(աստված-երկինքը) ջուր է թափում’ բայի մեջ՝ ‘աստված-երկինքը’։ Սա ժառանգություն է մարդկության այն իրաք նախապատմական կեցության, ըստ որում ոչ թե մեկ, այլ տարբեր էպոխաների, երբ մարդկությունը համոզված էր, մենք այժմ կասենք՝ դեռևս հավատում էր, որ հիվանդություններ ուղարկում են և եղանակ շինում հատուկ ոգիները, աստվածությունները և այլ ֆետիշները։ Լեզվի նոր ուսումնքը հենց այսպես էլ բացատրում է նաև ո՛չ միայն աստծու, այլև՛, որ ավելի կարևոր է, մեր ռեալ կյանքի բոլոր հարաբերությունները, որոնք կապված են նրա (աստծու) հետ՝ համաձայն այժմ էլ գոյու-

թյան ունեցող վերապրուկ (пережиточные) աշխարհայացքների:

